պատը. կը վախճանի 1912ին, Երուսաղէմի մէջ յիշատակ կը թողու մթերանոց մը ի նպաստ Ս. Յակոբի։

ԳՐԻԳՈՐ ԱՐԾԿԵՑԻ, (Վանայ ծովակին հիւսիսային կողմը), Քրձ.— Ս. Յակոբի վանքին Ս. Հրեշտակապետ և Ս. Աստուածածին եկեղեցիներուն մէջ, ՊՂ (= 1441) թուին, կ'ընդօրինակէ Աւետարան մը. Գրիգոր կթղ. Մուսաբէկեանցի, և Եգիպտոսի սուլթան Զաղմազի օրով. (* 13 փետր. 1453). (ROC. 1922-23 էջ 190)։

ԳՐԻԳՈՐ (ՄՀՏ. ՍԱՐԱՖ) ԲԻՆԿԵԱՆՑԻ ԵՒ ՈՐԴԻՐ (ԱԿՆ).— Ս. Յակոբի վանքին Ս. Թէոդորոս եկեղեցիի դրան վրայ ունին յիշատակարան մը. «Յիշատակ է Բինկեանցի Սարաֆ Մահտեսի Գրիգորի որդւոց Սարաֆ մահտեսի Աղեքսանդրի, մահտեսի Յովհաննէսին, մահտեսի Գասպարին, ի վանքն Ս. Յակոբայ, ի դուռն Սրբոյն Թէոդորոսի եկեղեցւոյն ՌՄԻԸ». (= 1779). Նոյն թուականով և նոյն անուններով կայ նաև ուրիշ յիշատակարան մը նոյն եկեղեցիին մէկ ուրիշ կողմը։ Մհտ. Գրիգոր՝ իբր յիշատակ գնած է Ասորւոց եկեղեցիին մօտ տուն մը, յորդորմամբ Շղթայակրին (ՄՁ. թ. 532)։

ԳՐԻԳՈՐ ԳՐԻՁ.— Հայրը Աւետիք, 1620ին գրուած յիշատակարան մը ունի սա ծանօթութիւնը. «որ ետ գրել զայս գիրքս, Մեկնութիւն Յոքայ յիշատակ ի Ս. Երուսաղէմ։»

ԳՐԻԳՈՐ ԴՊԻՐ.— 1857ին յօրինած է Բանիք Սակաւաւանանեայ ի վերայ խոնարհութեան անուն աշխատասիրութիւնը։

ԳՐԻԳՈՐ ԵՊՍ. ԱՂԹԱՄԱՐՑԻ.— 1813ին ուխտաւորութեամբ կ'այցելէ Ս. Յակոբի վանքը (Կոնդակ Պե. Վանցի Թէոդորոսի)։

ԳՐԻԳՈՐ ԵՊՍ.— Մբ. 1685ին։

ԳՐԻԳՈՐ ԵՊՍ. ԱՐԱՊԿԻՐՑԻ.— Ուխտաւորութեամբ կ'այցելէ Ս. Յակոբի վանքը։ (Սիօն 1866. էջ 102)։

ԳՐԻԳՈՐ ԵՊՍ. ԳԱՌՆԱԿԵՐԵԱՆ, ՎԱՂԱՐՇԱՊԱՏՑԻ.— Մբ. Ս. Էջմիածնի. Ծ. 1836ին. կը ձեռնադրուի եպս. 1890ին. 1906ին ուխտաւորութեամբ կ'այցելէ Ս. Յակոբի վանքը, նոյն տարին կ'երթայ նաև Եգիպտոս և Հռովմ։ Վարած է առաջնորդական և վանական պաշտօններ Էջմիածնի և այլուր. կը վախճանի 1910ին։